ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 1023 - Ա

ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասով՝

1. «Օվերնյ-Ռոն-Ալպեր Հայաստան Սյունիք բարեկամության օր» միջոցառմանը մասնակցելու նպատակով 2024 թվականի նոյեմբերի 20-23-ը Ֆրանսիայի Հանրապետություն (Լիոն) գործուղել պատվիրակություն՝ համաձայն հավելվածի:

2. Պարույր Հովհաննիսյանի՝ Ֆրանսիայի Հանրապետություն գործուղման ծախսերը կատարել Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությանը հատկացված միջոցների հաշվին:

3. Արման Խոջոյանի՝ Ֆրանսիայի Հանրապետություն գործուղման ծախսերը կատարել Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանը հատկացված միջոցների հաշվին:

4. Վաչե Տերտերյանի՝ Ֆրանսիայի Հանրապետություն գործուղման ծախսերը կատարել Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեով

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածք-ների նախարարությանը հատկացված միջոցների հաշվին:

5. Լևոն Օհաննեսյանի՝ Ֆրանսիայի Հանրապետություն գործուղման ծախսերը կատարել «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ հիմնադրամ) հոգաբարձուների խորհրդի նիստով հաստատված հիմնադրամի 2024 թվականին կանխատեսվող եկամուտների և ծախսերի վերաբերյալ նախահաշվի հիման վրա:

6. Ռոբերտ Ղուկասյանի՝ Ֆրանսիայի Հանրապետություն գործուղման ծախսերը կատարել Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի աշխատակազմին հատկացված միջոցների հաշվին:

7. Պատվիրակության անդամների՝ Ֆրանսիայի Հանրապետություն գործուղման գիշերավարձի ծախսերը կատարել՝ համաձայն փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի:

8. Պատվիրակության անդամներին՝ ապահովել եռօրյա ժամկետում Ֆրանսիայի Հանրապետություն գործուղման արդյունքների մասին հաշվետվությունը Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն ներկայացնելը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշմամբ սահմանված կարգի:

9. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին՝ ապահովել հնգօրյա ժամկետում Ֆրանսիայի Հանրապետություն գործուղման արդյունքների մասին հաշվետվությունը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշմամբ սահմանված կարգի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

15.11.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ